

ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լրատու

ՍԵՊՏԵՄԲԵՐ 5-16 2015 Թ. ԹԻՎ 23 (2078)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՄԹԵՐՈՒՄ



Հանրապետությունում մեկնարկել է խաղողի մթերման գործընթացը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով եղել է «Երևանի կոնյակի գործարանի» Արմավիրի մասնաճյուղում, որտեղ տրվել է խաղողի մթերման մեկնարկը: Մասնակցում էին նաև Արմավիրի մարզպետ Աշոտ Ղաիրամանյանը և «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ գործադիր տնօրեն Իգոր Առաքելյանը:

Սեպտեմբերի 8-ից գործարանի Արարատի մասնաճյուղում սույնպես սկսվել է խաղողի մթերման գործընթացը, որին հետևել են հանրապետության բոլոր մթերող կազմակերպությունները: Նախարարի խոսքով՝ այս տարի խաղողի բերքն՝ ըստ կանխատեսումների, 10-15 տոկոսով կգերազանցի նախորդ տարվա մակարդակը, ուստի բոլոր արտադրողների հետ անհատական աշխատանք է տարվում, որպեսզի ստացված բերքն ամբողջ ծավալով մթերվի: «Անցյալ տարի արտադրվել է 261 հազար տոննա խաղող, որից 184 հազար տոննան մթերվել է: Այս տարի ակնկալում ենք, որ խաղողի արտադրության ծավալները կհասնեն 290-295 հազար տոննայի, մթերման ծավալները նույնպես ավելանալու են: Ուզում եմ հավաստիացնել գյուղացիական տնտեսություններին, որ արտադրված բերքն ամբողջությամբ կմթերվի», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախորդ տարի մթերվող խաղողի 1 կգ-ի արժեքն Արարատյան դաշտավայրում կազմել է 150 դրամ, իսկ Տավուշի մարզում՝ 140 դրամ: Այս տարի «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն կպահպանի նախորդ տարվա գները: Նախարարությունը մյուս գիտնու գործարաններին ևս հորդորում է պահպանել խաղողի մթերման նախորդ տարվա գները:

Գործադիր տնօրեն Իգոր Առաքելյանի փոխանցմամբ, թեև իրենց պահանջարկը 30 հազար

Է 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Ջրի մատակարարման աշխատանքները դրական են գնահատվել

Օրերս Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանն աշխատանքային այցով եղել է Արարատի մարզում:

Այցի ընթացքում Արամ Հարությունյանն ու Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը ամռան գյուղատնտեսական աշխատանքների ավարտական փուլում տարվող աշխատանքներին հետևելու և ընթացքը վերահսկելու նպատակով, եղել են Մխչյանի 1-ին և 2-րդ աստիճանի ջրհան կայաններում, տեղում դիտարկել ոռոգման ջրի մղման աշխատանքները: Արարատի մարզի ոռոգման ջրամատակարարումն ապահովող Մխչյանի 1-ին և 2-րդ աստիճանի ջրհան կայաններում շրջայցի պահին գործադրված էին համապատասխանաբար 5 և 4 պոմպեր:

Արամ Հարությունյանն ու Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը նաև եղել են Ջրաշեն համայնքի տարածքում գտնվող գյուղացիական տնտեսություններում, հանդիպել հողատարածքների մշակմամբ զբաղվող Ջրաշեն, Դիտակ, Աբովյան, Չովաշեն համայնքների գյուղացիների հետ: Գոհունակություն արտահայտելով ամռան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում իրենց մատակարարված մեծ ծավալով ջրի դիմաց՝ գյուղացիները բարձրացրել են նաև ոռոգման ջրի մատակարարման խողովակաշարերի որոշ հատվածների վերափոխման և նոր խորքային հորի շահագործման հարցեր ու ստացել դրական պատասխան:

Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանն ու Արամ Հարությունյանն այնուհետև դիտարկել են Մխչյանի 2-րդ աստիճանի ջրհան կայանի՝ դեպի Արարատ և Վեդի ՋՕԸ-եր մատակարարվող ջրի սկզբնահատվածի շահագործման աշխատանքները, որտեղ շրջայցի պահին մղվում էր 6500 Լ/վ ծավալով ջուր:

Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, ամփոփելով այցի ընթացքում կատարված ուսումնասիրություններն ու դիտարկումները, ասել է, որ անցյալ տարիների համեմատ, ոռոգման

Է 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Յուրի Աբրահամյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և պաշտոնյա այլ անձանց ուղեկցությամբ, այցելել է Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներ, ծանոթացել սահմանային գոտում առկա իրավիճակին, այնտեղ իրականացվող ծրագրերի ընթացքին և խնդիրներին:

Կառավարության ղեկավարի առաջին կանգառը եղել է Պառավաբար համայնքը: Բնակիչների հետ հանդիպմանը Յուրի Աբրահամյանն, անդրադառնալով սահմանում տիրող լարված իրավիճակին և հակառակորդի կողմից իրադադարի ռեժիմի պարբերաբար խախտման դեպքերին, ընդգծել է, որ ՀՀ իշխանությունները սահմանամերձ համայնքների բնակիչների կողքին են:

Վարչապետը նշել է, որ կառավարությունը, տարբեր սոցիալական և հարկային արտոնություններ սահմանելով, սահմանամերձ համայնքների բնակիչների համար փորձում է հնարավորինս աջակցել նրանց և լուծում տալ նրանց սոցիալական խնդիրներին: Տեղի բնակիչները բարձրացրել են համայնքի որոշ հատվածներում գազիֆիկացմանը, ճանապարհահատվածի վերանորոգմանը, ոռոգման ջրի, մանկապարտեզի ներքին հարդարմանը, ուսանողների ուսման վարձերին վերաբերող խնդիրներ:

Գործադիր ղեկավարը խոստացել է դրանք քննարկել կառավարությունում և տալ համապատասխան լուծումներ: Յուրի Աբրահամյանն այնուհետև այցելել է Սևքար համայնք: Տեղի բնակիչները նշել են, որ հակառակորդի կրակահերթերի պատճառով համայնքում որևէ խուճապ չկա և իրենք ապրում են առօրյա կյանքով:

Սևքարի համայնքապետը բնակիչների անուկից շնորհակալություն է հայտնել վարչապետին՝ համայնքի ջրագծի և մշակույթի տան վերակառուցման համար: Միաժամանակ մարզպետ Յուրի Աբովյանը տեղեկացրել է, որ առաջիկայում էլ կսկսվեն Սևքարի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Յուրի Աբրահամյանն այցելել է նաև Կոթի համայնք: Կոթեցիները կառավարության ղեկավարին շնորհակալություն են հայտնել իրենց այցելելու համար և նշել, որ իրենց բարոյահոգեբանական վիճակն, ինչպես միշտ, բարձր է:

Այնուհետև վարչապետը լսել է համայնքի բնակիչներին հուզող հարցերը, որոնք վերաբերել են վառելիքայտոլ ապահովմանը, 27 հեկտար ցորենի արտերը կրակոցների հետևանքով չմշակելուն, ինչպես նաև ուսանողների ուսման վարձերին: Գործադիր ղեկավարը խոստացել է անհրաժեշտ գումարներ տրամադրել ինչպես վառելիքայտոլի, այնպես էլ՝ չմշակված ցորենի փոխհատուցման համար:

Վարչապետը համայնքապետին հանձնարարել է կառավարություն ներկայացնել Կոթիի ուսանողների ցանկը՝ նրանց ուսման վարձերի խնդիրն ևս լուծում տալու համար: Վարչապետ Աբրահամյանը վստահեցրել է նաև, որ հակառակորդի կողմից կրակահերթերի հետևանքով սահմանամերձ համայնքների բնակիչների բնակարանների կրած վնասները կփոխհատուցի ՀՀ կառավարությունը:

Նախարարն ամփոփել է արդյունքները	Էջ 3
Իրականացվում են հեռակարային ծրագրեր	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ՄԹԵՐՈՒՄ

Հանրապետությունում մեկնարկել է խաղողի մթերման գործընթացը

1

տոննա է կազմում, սակայն պատրաստ են այս տարի մթերել շուրջ 35 հազար տոննա խաղող, ընդ որում, մթերման գնի նվազում չի լինելու: Նա նաև հավելել է, որ գործարանն իր առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է պահում Տավուշի մարզում խաղողագործության զարգացման հարցերը: Իգոր Առաքելյանի խոսքով՝ Տավուշի մարզում այս տարի խաղողի բարձր բերք է ակնկալվում, և անկախ նրանցից, թե նախապես ինչ ծավալներով են կնքվել պայմանագրերը, իրենք ամեն ինչ կանեն, որպեսզի գյուղացիների ամբողջ բերքը մթերվի: Ըստ նրա՝ ընթացիկ տարում ևս, ապառիկ կարգով, խաղողագործներին այգիների մշակման համար տրամադրվել են բուժանյութեր՝ մոտ 250 միլիոն դրամի չափով և այլ աջակցություն:



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Ջրի մատակարարման աշխատանքները դրական են գնահատվել

1

Ջրի համակարգում գրանցել են բարձր արդյունքներ, ինչը պատկան մարմինների և գյուղացիների համատեղ աշխատանքի արդյունքն է:



Գյուղացիների օգտագործած ջրի դիմաց վճարումներն ու մեր ամենօրյա ինտենսիվ աշխատանքը տվել են դրական արդյունք: Անցած տարիների համեմատ ունեցած բարձր արդյունքները, բնականաբար, ամենօրյա բարեխիղճ ու ազգաբնակչության շահերին նպատակաուղղված աշխատանքից են բխում և պարտավորեցնում են հաջորդ գյուղատնտեսական տարում ոչ միայն ավելացնել մշակելի հողատարածքներն, այլև ունենալ ավելի արդյունավետ ու կազմակերպված ջրամատակարարում:

Խագահ Արամ Զարությունյանն իր խոսքում ևս դրական է գնահատել Արարատի մարզի ոռոգման ջրի մատակարարման աշխատանքների կազմակերպումն ու ավելացրել.

«Մեր բոլոր աշխատանքները նպատակաուղղված են գյուղացիական տնտեսությունների բարգավաճմանն ու հողերի բարձր բերրիությանը, ինչը ենթադրում է նորմալ ջրամատակարարում: Ավարտված համարելով տարվա գյուղատնտեսական աշխատանքների առաջին փուլը՝ մենք ճանապարհ ենք հարթում աշնան գյուղատնտեսական աշխատանքների համար: Այդ աշխատանքների ընթացքում մեզ ցուցաբերած աջակցության և առկա խնդիրներին հրատապ լուծում տալու համար շնորհակալություն եմ հայտնում Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանին, ինչպես նաև գյուղացիներին՝ իրենց պարտավորությունները ժամանակին կատարելու համար», - եզրափակել է Արամ Զարությունյանը:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նորույթ՝ սահմանամերձ Վարազավանում



Տավուշի ԳԱՄԿ-ի կողմից տրամադրված ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալներն արդեն երկրորդ տարին է, ինչ մեծ պահանջարկ ունեն Բերդի տարածաշրջանի Վարազավան համայնքի «Ծիրանկուտ» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի կողմից:

Չրթական այցելության ժամանակ ականատես եղանք արդեն պատրաստի շուրջ 1500 ընտիր արմատակալներ: ԳԱՄԿ-ի խորհրդատու Սամվել Եղիկյանի հավաստմամբ, արմատակալների քանակն առաջիկա 3 տարում՝ համապատասխան աջակցության պարագայում, կհասցվի 35.000-ի: Կոոպերատիվի նախագահ Սամվել Մանուչարյանը

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ օգտվելու հմտություն

Հայ-ճապոնական համագործակցության «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում, վերջերս «Նատֆուդ» ընկերության տարածքում կայացավ վակուումային փաթեթավորման սարքավորումների հանձնման արարողությունը և դրանցից օգտվելու հմտությունների վերաբերյալ դասընթացը՝ ՓՄՁ-ների համար:

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանը նշել է, որ սարքավորումները կոչված են ծառայելու բիզնեսի զարգացմանը և հորդորել է լինել ավելի եռանդուն և նվիրված: «Նատֆուդ» ընկերության գործադիր տնօրեն Իշխան Կարապետյանն ուրախ է, որ հենց «Նատֆուդ» ընկերությունն է ներկրել սարքավորումները և վստահեցրել, որ դրանց օգտագործման և սպասարկման հարցերով գործարարները կարող են հետազայում ևս դիմել ընկերությանը: Ծառայության միջազգային համագործակցության գործակալության ծրագրի գլխավոր խորհրդատուի տեղակալ Հիրոյուկի Տանական կարևորել է որ սարքավորումների վերաբերյալ դասընթացի ընթացքում հատկապես պետք է ուշադրություն դարձնել մանրուքների վրա, քանի որ մանր թվացող բազմաթիվ տեխնիկական նրբություններն է կախված արտադրության արդյունավետությունը:

Սարքավորումները տրամադրվել են Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերում գործող չրերի և պանրի արտադրությամբ զբաղվող 8 ՓՄՁ-ների: Նպատակն էր՝ իրականացնել սննդի անվտանգության միջազգային չափորոշիչներին համապատասխան վակուումային փաթեթավորում, ինչը կբերի արտադրանքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, հետևաբար՝ նաև վաճառքի ծավալի ավելացմանը: Սարքավորումները կերկարացնեն ապրանքի պահպանման ժամկետը, կմեծացնեն արտահանման ներուժը: Սարքավորումները ձեռք են բերվել ճապոնական կողմի տեխնիկական աջակցության շրջանակում, իսկ մատակարարումն իրականացրել է «Նատֆուդ» ընկերությունը:

Ընկերության մասնագետները ձեռնարկատերերին ներկայացրել են փաթեթավորման սարքավորումների օգտագործման եղանակները, նաև փոխանցել ապրանքի ճիշտ փաթեթավորման և պահպանման հիմնական գիտելիքներն ու հմտությունները:

Միջոցառման նպատակն է՝ նպաստել մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտների ստեղծմանն ու զարգացմանը՝ հետևողականորեն իրականացնելով ՀՀ կառավարության կողմից որոշված քաղաքականությունը՝ ՓՄՁ զարգացման ուղղությամբ:

ՓՄՁ ՉԱԿ

Գերխնդիրը՝ նոր աշխատատեղերի ստեղծումն է

2001 թվականին Վանաձոր քաղաքում, նախկին «Էլեկտրոն» գործարանի բազայի վրա, հիմնվեց «Չինվան» ՍՊԸ-ն: Ընկերության գործունեության նպատակը՝ Չինաստանից համեմատաբար մատչելի գներով տեխնոլոգիական սարքավորումների և փոքրածավալ գյուղատնտեսական տրակտորների ներկրումն ու իրացումն էր:

Նախորդ տարիներին ընկերությունն իրացրել է Չինաստանից ներկրված 700-ից ավելի տրակտոր և դրանց ավելի քան 3000 կցորդից սարքավորումներ: Հիմնումից երկու տարի անց ՍՊԸ-ն ձեռնարկեց նաև գյուղսարքավորումների սեփական արտադրություն: Գործարանն ունի նաև 5000 մ² տարածքով բանջարաբուստանային մշակաբույսերի ջերմոցային տնտեսություն:

Վերջերս Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության և մի խումբ մասնագետների հետ այցելել է «Չինվան» ՍՊԸ՝ տեղում ծանոթանալու ձեռնարկության ընթացիկ աշխատանքներին ու հեռանկարներին: Ընկերության տնօրեն Սամվել Նաջարյանը գյուղսարքավորումների արտադրամասերում ներկաներին ծանոթացրել է թողարկվող արտադրատեսակներին՝ ընդգծելով, որ իրենց ձեռնարկության թողարկած հնձիչները, խոտհավաքները, գուլաններն ու կուլտիվատորները, փորհիչներն ու ամբարձիչները ոչ միայն 30-35%-ով մատչելի են համաշխարհային շուկայում առկա արտադրատեսակներից, այլև որակով չեն զիջում և իրենց երկարակյանությամբ, գերազանցում են արտասահմանից ներկրվողներին: Մեծաքանակ պատվերի դեպքում, ըստ տնօրենի, ընկերությունը կիրառում է եական գեղջեր: Ձեռնարկության արտադրանքը ոչ միայն սպառվում է մեր հանրապետությունում, այլև՝ Արցախում և Վրաստանում:

Գործարանի պտղատու այգում հյուրերին ցուցադրվեց վերջերս մշակված և թողարկված մոլախոտերի քաղահանում և ծառերի բնորոշ բաժակափոր կատարող սարքի աշխատանքը, որն, ըստ մասնագետների, կփոխարինի տասնյակ մարդկանց ձեռքի աշխատանքին: Մարզպետը նշել է. «Մեր գերխնդիրը, նորանոր աշխատատեղերի ապահովմամբ, բնակչության ոցիակալան դրության աստիճանական բարելավումն է: Այս առումով աշխատում ենք ուշադրությունից դուրս չթողնել ցանկացած ոլորտ, ուր աշխատատեղ ստեղծելու հնարավորություն կա: Առաջիկայում կքննարկենք «Չինվանի» զարգացման ծրագիրը: Դրական եզրակացության դեպքում կդիմենք ՀՀ կառավարություն՝ ընկերությանը տնտեսական ընդլայնման ծրագրերում ներառելու, արտադրության ծավալներն ընդլայնելու և, որ ամենակարևորն է, նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով»,- նշել է մարզպետը:

ԱՍՈՒԼԻՍ

ՆԱԽԱՐԱՐՆ ԱՄՓՈՓԵԼ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղատնտեսության անդրկազմել է 14.8 տոկոս

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մամուլի ասուլիսում ներկայացրել է վերջին յոթ ամիսներին նախարարության իրականացրած աշխատանքները և անդրադարձել առաջիկա ծրագրերին:

Ամփոփելով հաշվետու ժամանակահատվածի արդյունքները՝ նախարարը նշել է, որ 2015 թվականն, ընդհանուր առմամբ, բարենպաստ էր գյուղատնտեսության համար, և պետական աջակցության ծրագրերի, ցանքատարածությունների ավելացման, արտադրության ինտենսիվության ավելացման ու ամենակարևորը՝ գյուղացու քրտնաջան աշխատանքի արդյունքում, ընթացիկ տարում, նախորդ տարվա համեմատությամբ, գրանցվել են էական դրական տեղաշարժեր: Նախարարը նաև ընդգծել է, որ աճն առկա է գյուղատնտեսության ոլորտի բոլոր ճյուղերում՝ թե բուսաբուծության և թե անասնաբուծության մեջ:

ԱՎԾ տվյալներով՝ ընթացիկ տարվա հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 328.4 մլրդ դրամ, որը 14.8 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, ընդ որում, բուսաբուծության ճյուղում աճը կազմել է 28.6 %, իսկ անասնապահությունում՝ 4.2 %: Նշված ժամանակահատվածում բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 145.4, իսկ անասնաբուծությանը՝ 183.0 մլրդ դրամ:

Նախարարը նշել է, որ բավարարվել է պետական օժանդակության ծրագրերով մարզպետարանների կողմից ներկայացված պահանջարկն ամբողջությամբ, այս տարի ավելացվել է նաև գյուղվարկերի սուբսիդավորման տոկոսադրույքը: Այն կազմել է 6 տոկոս՝ հնարավորություն տալով գյուղացիական տնտեսություններին շուկայականից անհամեմատ ցածր՝ 8 տոկոսով վարկեր ձեռք բերել:

Նախարարը կարևորել է նաև գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման և վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման ուղղությամբ գրանցված դրական արդյունքները: Նրա խոսքով՝ այդ ցուցանիշը 2014 թվականին կազմել է 74.4 %՝ 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2010-2014 թվականների ընթացքում, ավելացել են շուրջ 50.0 հազ. հեկտարով: Այդ միտումը շարունակվել է նաև ընթացիկ տարում: 2015 թվականին ցանքատարածությունները, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են 18.5 հազ. հեկտարով և կազմել 351.3 հազ. հեկտար՝ վարելահողերի օգտագործման մակարդակը հասցնելով 78.5 %-ի:

Ընդհանուր առմամբ, սերմնաբուծության, սերմնապահվության բնագավառում և գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելիության բարձրացման ծրագրերը նպաստել են հա-

ցահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացմանը և հացահատիկային տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը: Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները 2014 թվականին գերազանցել են 2010 թվականի մակարդակը 81.0 %-ով, իսկ բերքատվությունը բարձրացել է շուրջ 54.0 %-ով: Ցորենի արտադրության ծավալները նշված ժամանակահատվածում ավելացել են ավելի քան 84.0 %-ով, իսկ բերքատվությունը՝ 52.4 %-ով: Ծրագրերի իրականացումն իր դրական ազդեցությունն է ունեցել ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացման վրա: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները գերազանցում են նախորդ տարվա մակարդակը 5.8 %-ով կամ 11.0 հազ. հեկտարով, իսկ ցորենի ցանքատարածությունների աճը կազմել է 4.7 %, կամ 5.0 հազ. հեկտար:

Բացի այդ, այս տարի զգալիորեն՝ 9.4 %-ով կամ շուրջ 2.5 հազ. հեկտարով ավելացել են բանջարանոցային մշակաբույսերի տարածքները, 3 %-ով կամ գրեթե 1000 հեկտարով ընդլայնվել են բոստանային մշակաբույսերի տարածքները, ավելի քան 3.0 %-ով կամ շուրջ 1000 հեկտարով ավելացել են կարտոֆիլի, 3.2 հազ. հեկտարով կամ 4.1 %-ով՝ կերային մշակաբույսերի ցանքատարածությունները:

Նախարարը հավելել է, որ 2015 թվականին զգալի աշխատանքներ են իրականացվել նաև ջերմատնային տնտեսության զարգացման ուղղությամբ: Ներկայումս ջերմատների ընդհանուր տարածքը կազմում է 770 հա, որից ապակեպատ՝ 270, թաղանթապատ՝ 500 հա: Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ջերմատները կազմում են 85 հա, մինչև տարեվերջ Կոտայքի և Արարատի մարզերում կկառուցվեն ևս շուրջ 40-50 հա արդիական տեխնոլոգիաներով հագեցած ջերմատներ: Ջերմատնային տնտեսության զարգացման արդյունքում,



ընթացիկ տարվա գարնանից հանրապետության շուկաներում իրացվել է հիմնականում տեղական արտադրության լուլիկ և վարունգ:

Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ավելացումն ու անասնապահության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացումը պայմաններ ստեղծեցին անասնաբուծական մթերքների արտադրության ծավալներին



րի ավելացման համար: 2015 թվականի 7 ամիսներին անասնաբուծության համախառն արտադրանքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 4.2 %-ով և կազմել է 183.0 մլրդ դրամ: Ըստ օպերատիվ տվյալների՝ 2015 թվականի անցած ամիսներին շարունակվել է անասնազխաքանակի ավելացման միտումը:

Մասնավորապես, ընթացիկ տարվա հուլիսի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ խոշոր եղջերավորների գլխաքանակն ավելացել է 3.6 %-ով և կազմել 775.0 հազ. գլուխ: Մանր եղջերավորների գլխաքանակի աճը գնահատվում է 7.2 % և կազմել է 981.0 հազ. գլուխ: Խոզերի գլխաքանակի աճը, նշված ժամանակահատվածում, ըստ օպերատիվ տվյալների, գնահատվում է 11.4 % և կազմում է 185.0 հազ. գլուխ:

Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հավաստիացրել է, որ իրականացված նախապատրաստական աշխատանքների արդյունքում, հանրապետությունում մթերում են սահուն: Սեպտեմբերի 9-ի դրությամբ, գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 22 հազ. տոննա բանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 4.0 %-ով, իսկ պտղի մթերումների ծավալը կազմել է 11700.0 տոննա, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 2.7 անգամ:

Նախարարը հավելել է, որ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը նպաստել է ընթացիկ տարում թարմ բուսաբուծական մթերքների արտա-

հանման ծավալների ավելացմանը: Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 72.0 %-ով, իսկ 2014 թվականի արտահանման տարեկան ցուցանիշն արդեն իսկ գերազանցվել է 18.0 %-ով (8550 տոննայով): Ընդ որում, ծիրանի արտահանման ծավալները 11.8 անգամ (2014 թ. արտահանվել է 1791.2 տոննա): Արտահանման գործընթացը շարունակվում է, և իրական նախադրյալներ կան նախորդ տարվա նկատմամբ ծավալների կրկնապատկման համար:

2015 թվականի սեպտեմբերի 9-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 55 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 29130 տոննա պտուղ, որից՝ 21250 տոննա ծիրան, 2204 տոննա կեռաս, ինչպես նաև 2500 տոննա խաղող, 18246.0 տոննա բանջարեղեն և 4893 տոննա կարտոֆիլ:

Ընթացիկ տարում ընդլայնվել է թարմ բուսաբուծական մթերքներ արտահանվող երկրների շրջանակը, արտահանման մեջ գերակշռում է Եվրասիական տնտեսական միության երկրների մասնաբաժինը, մասնավորապես՝ Ռուսաստանին բաժին է ընկել արտահանման ընդհանուր ծավալի 82.9 %-ը՝ 2014 թվականի նույն ժամանակահատվածի 32.9 %-ի դիմաց:

Գյուղատնտեսական մթերքների իրացմանը նպաստելու համար, ընթացիկ տարում նույնպես ուշադրություն է դարձվել մայրաքաղաքում գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպմանը: Ընդհանուր առմամբ, սույն թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ, կազմակերպվել է թվով 40 տոնավաճառ, որոնց մասնակցության համար գրանցվել է շուրջ 5000 գյուղացիական տնտեսություն: Միջին հաշվով, 2 տոնավաճառում, 1 օրվա ընթացքում, իրացվում է 80-90 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ՝ շուրջ 3400 տոննա:

Ամփոփելով խոսքը՝ նախարարը հավաստիացրել է, որ առկա են բոլոր նախադրյալները՝ 2015 թվականը բարձր ցուցանիշերով եզրափակելու համար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ՌԵՍՈՒՐՍԱՆԵՆ ԱՅՈՒՄՆԵՍՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

Կլիմայի փոփոխության, երաշտի, հողերի դեգրադացիայի, հողափորման և հողերի անխնա օգտագործման հետևանքով, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում հողօգտագործումն, առավել քան երբևէ, կանգնած է հողային միկրոֆլորայի, լանդշաֆտի, կլիմայի և ջրի որակի պաշտպանության հրամայականի առջև: Այդ տեսանկյունից, ժամանակակից երկրագործության վարման առաջնային նպատակներից է՝ վարելահողերի բերրիության պահպանումը և հետագա բարելավումը, ինչն առաջ է բերում նոր ռեսուրսային այոջական երկրագործության համակարգերի, հողի նվազագույն և զրոյական մշակությունների տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը: ՊԳԿ-ն և ԱԳԶԿ Հիմնադրամն աջակցում են ռեսուրսային այոջական գյուղատնտեսության և անվար ցանքի կիրառմանն ու ներդրմանը Հայաստանի Հանրապետությունում:

ՊԳԿ-ի կողմից իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման» (ԵՀԳԶԾ/ENPARD) և ԱԳԶԿ Հիմնադրամի կողմից իրականացվող «Կայուն գյուղատնտեսության արժեքային զարգացում» ծրագրի շրջանակներում, Տաշիրում կայացավ աշխատաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում ռեսուրսային այոջական գյուղատնտեսության և անվար երկրագործության կիրառման հեռանկարներին, ինչպես նաև՝ հացահատիկային մշակաբույսերի մշակության առաջավոր փորձին: Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության, գիտական կենտրոնների, ԳԱՄԿ-երի, Լոռու մարզ-

առաջանում է մարդկանց կերակրելու խնդիր, որի լուծման նպատակով, շատ երկրներ հողի մշակության ավանդական եղանակից անցնում են ռեսուրսային այոջականին՝ կիրառելով անվար տեխնոլոգիան», - նշել է նա: Ավելի քան 2 մլն Եվրո բյուջեով այս ծրագիրը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Հայաստանին՝ չորս հիմնական ուղղություններով: «Առաջինը ինստիտուցիոնալ զարգացումը և քաղաքականության ներդաշնակեցման աջակցելն է, երկրորդը՝ գյուղատնտեսական արտադրանքի և բնական պաշարների կայուն օգտագործումն ու կառավարումը, հաջորդ երկուսը վերաբերում են գյուղական շրջանների կարողությունների և ենթակառուցվածքների, ինչպես նաև՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման և վիճակագրության բարելավ-

թաղում է գյուղատնտեսության արտադրողականության բարձրացում, ագրո-էկոհամակարգերի կայունության ապահովում, հողի բերրիության և որակի բարելավում, կլիմայի փոփոխությունից կախվածության նվազում, ինչպես նաև եկամտաբերության բարձրացում: Այս եղանակը մեծ ազդեցություն ունի նաև հողի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունների վրա: Մեկ առավելություն ևս. անվար մշակության դեպքում կարգավորվում է հողի ջերմաստիճանը, կանխվում է էրոզիան:

ԱԳԶԿ Հիմնադրամը, «Կայուն գյուղատնտեսության արժեքային զարգացում» ծրագրի շրջանակներում, իրականացրել է հացահատիկային տարբեր մշակաբույսերի (ցորեն, գարի, եգիպտացորեն) նոր տարտերի փորձարկումներ, ինչպես Տաշիրում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության այլ մարզերում: Տաշիրում «Բոզոյան» ՍՊԸ-ի հետ համատեղ, իրականացված փորձարկումների արդյունքում պարզվել է, որ փորձարկվող հացահատիկային մշակաբույսերի նոր տարտերն առավել արդյունավետ են ցանքի անվար տեխնոլոգիայի կիրառման դեպքում, որի շնորհիվ ստացվել է միջինից բարձր բերքատվություն:

Աշխատաժողովի ընթացքում, ԱԳԶԿ Հիմնադրամի կողմից հրավիրված, «Զոն Դիր» ընկերության ներկայացուցիչ Վահան Ղազարյանը ներկայացրեց ռեսուրսային այոջական գյուղատնտեսության կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև անվար երկրագործության ժամանակ կիրառվող ժամանակակից գյուղատնտեսական սարքավորումներ: Այցելելով «Բոզոյան» ՍՊԸ-ին պատկանող մեքենասարքավորումների հենակայան՝ աշխատաժողովի մասնակիցները հնարավորություն ունեցան, Վահան Ղազարյանի ուղեկցությամբ, ծանոթանալ «Զոն Դիր» ընկերության սարքավորումների աշխատանքային և տեխնիկական առանձնահատկություններին: Մասնակիցները նաև այցելեցին հացահատիկի պահեստավորման տարածք, որտեղ «Բոզոյան» ՍՊԸ գործադիր տնօրեն Զոն Պողոսյանի ներկայացմամբ, ծանոթացան ցորենի պահեստավորման ժամանակակից տեխնոլոգիայի հետ:

Զոն Բարբերը, ով Եվրոպական միության պատվիրակության միջազգային համագործակցության պատաս-



խանատու է Հայաստանի Հանրապետությունում, նշել է, որ ծրագիրը, 3 տարի տևողությամբ, նախատեսված է ցանկացած հզորության ֆերմերային տնտեսությունների համար: «Ես շատ տպավորված եմ այն ֆերմերների ոգևորությունով, ովքեր ցանկանում են կիրառել այս արդյունավետ տեխնոլոգիան և զարգացնել այն», - նշել է պրն Բարբերը, ով ղեկավարել է ֆերմերային տնտեսություն Անգիլայում, որտեղ նույնպես ներդրվել է հողի նվազագույն մշակության եղանակը: Աշխատաժողովի ավարտին մասնակիցները եղան նաև «Բոզոյան» ՍՊԸ-ի անվար եղանակով ցորենի ցանքադաշտերում: «Ուշույն էլ է Հայաստանում անվար ցանքի կիրառումը, քանի որ կրճատվում է աշխատանքային մի քանի պրոցես, ինչը նպաստում է արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը: Իսկ դա շուկայում մրցունակ լինելու հնարավորություն է ընձեռում», - ցանքատարածքները դիտելուց հետո իր կարծիքն է հայտնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Աշոտ Հարությունյանը:

Նշենք, որ ԱՄՆ-ում անվար եղանակով ցանքի տակ է դրվում 35 մլն. 613 հազար, Արգենտինայում՝ 29 մլն. 181 հազար, Բրազիլիայում՝ 31 մլն. 811 հազար, Կանադայում՝ 18 մլն. 313 հազար, Ռուսաստանում՝ 4 մլն. 500 հազար հա հողատարածք: Աշխարհում այդ եղանակով ցանվում է ավելի քան 156 մլն. 991 հազար հա հողատարածք: Հայաստանում անվար մշակության ցանքատարածքները կազմում են 1700 հա:

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ ռեսուրսային այոջ-



ղատնտեսությունը մի մտեցում է, որն ուղղված է նախևառաջ մոլորակի պարենային անվտանգության ապահովմանը:

Նելլի Սահակյան



մանը», - նշել է ծրագրի ղեկավարը: ՊԳԿ գյուղատնտեսության գծով փորձագետ Արմեն Զաքարյանն իր զեկույցում անդրադառնալով անվար երկրագործության տեխնոլոգիայի առավելություններին՝ նշել է, որ այն օգնում է կառավարելու ագրո-էկոհամակարգերի տեսանկյունից բարելավված և կայուն արտադրողականությունը, ավելացնել շահույթը, միևնույն ժամանակ պահպանել ու ընդլայնել ռեսուրսային բազան եվ շրջակա միջավայրը: Ի դեպ, ռեսուրսային այոջական գյուղատնտեսությունը մի շարք սկզբունքների ամբողջություն է, որոնց կիրառման դեպքում հնարավոր է կանխել հողերի դեգրադացիան և ճիշտ օգտագործել առկա



պետարանի և լրատվության ներկայացուցիչներ, ֆերմերներ, շահագրգիռ անձինք: Աշխատաժողովի նպատակն էր՝ ներկայացնել վերը նշված տեխնոլոգիաների առավելությունները, ցուցադրել «Բոզոյան» ՍՊԸ-ի կողմից կիրառվող հացահատիկային մշակաբույսերի մշակության առաջավոր փորձը, անվար երկրագործության և հատիկի պահպանման նորագույն տեխնոլոգիաները: Բացման խորով հանդես եկավ ՊԳԿ ԵՀԳԶԾ/ENPARD ծրագրի ղեկավար Վահան Ամիրխանյանը: «Որոշ կանխատեսումներով սպասվում է, որ աշխարհի բնակչության թիվն աճելով, 2050 թ. կհասնի 9 միլիարդի (ներկայումս այն 6 մլրդ է): Բնականաբար

ջրային պաշարները: «Ռեսուրսային այոջական գյուղատնտեսության 3 հիմնական սկզբունքներն են՝ հողի զրոյական կամ նվազագույն մշակումը, ամբողջ վեգետացիայի ընթացքում բուսածածկի ապահովումը (նվազագույնը՝ հողի 30%-ը պետք է ծածկված լինի մշակելի մշակաբույսերով կամ դրանց մնացորդներով, խոսքը վերաբերում է մուլչի կիրառմանը): Բացի այդ, պետք է իրականացվի ցանքաշրջանառություն՝ նվազագույնը 3 տարբեր մշակաբույսերի կիրառմամբ: Ցանկալի է կիրառել 1 թիթեռնաձողկավոր մշակաբույս», - նշել է Ա. Զաքարյանը: Ինչ վերաբերում է անվար երկրագործության առավելություններին, ապա ըստ մասնագետի, այն են-

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՅ ՓՈՐՁԱԳԵՏՆ ԾԳՆՈՒՄ Է ՎԵՐԱՁԵՎԱԿՈՐԵԼ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼՈՒԲԱԼ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) տնօրեն Վարդան Ուռուտյանը, օգոստոսի 24-26-ին Թայլանդի մայրաքաղաք Բանգկոկում, մասնակցել է Գյուղատնտեսական հետազոտությունների գլոբալ համաժողովի (GFAR) վստահորդների համագումարին:

հավաքական գործողությունները, մեխանիզմներն ու կառավարման գործընթացը: Համագումարն առաջին լուրջ քայլն էր կազմակերպության գործունեության մեջ՝ ակնկալվող փոփոխությունների իրականացման ճանապարհին: GFAR-ը հիմնադրվել է 1996թ.՝ պետականորեն իրականացվող հետազոտությունները շահակիցների հիմնա-

կառավարման բարելավումներ իրականացնել գյուղական համայնքների կյանքում: «Գյուղատնտեսական հետազոտությունների և նորարարության ապագան փոխըմբռնման սոր մակարդակ է պահանջում՝ պետական և մասնավոր հետազոտություններ իրականացնողների, ֆերմերների, քաղհասարակության, կրթական, գիտասփյուռն և գործարար ոլորտների միջև: ԱՀԿՄԿ/ ICARE հիմնադրամը, լինելով CACAARI-ի ակտիվ անդամ կազմակերպություններից մեկը, կրում է GFAR-ի արժեքներն ու սկզբունքները և հավատացած է, որ Հայաստանի ագրոպարենային ոլորտի հետազոտությունների և նորարարության բնագավառում անհրաժեշտ է յուրացնել սոր ըմբռնումներ, որոնք հնարավորություն կտան ոլորտի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ու քաղաքականությունը դարձնել ավելի հաշվետվողական, հարակալուն և ֆերմերների ու գյուղական աղքատների կարիքներին արձագանքող: Իր ազգային, տարածաշրջանային և միջազգային գործընկերների հետ միասին հիմնադրամն առաջիկայում ևս ակտիվորեն մասնակցելու է ծավալվող գործընթացներին», - նշել է Ուռուտյանը:



յուր ոլորտի՝ միջազգայնորեն ճանաչված առանցքային այն գործիչների թվում էր, ովքեր առաջադրվել և ընտրվել են շահակիցների համաշարհային և տարածաշրջանային ցանցերի միջև տեղի ունեցած խորհրդակցական գործընթացի միջոցով: Որպես Գյուղատնտեսական հետազոտական հաստատությունների Կենտրոնական Ասիայի և Կովկասի ընկերակցության (CACAARI) պատվիրակ, Վարդան Ուռուտյանը հրավիրվել էր, որպեսզի օգնի վերաձևավորել GFAR-ի

կան խմբերի հետ կապակցելու համար՝ նպատակ ունենալով քննարկել գլոբալ կարևորություն ունեցող խնդիրներ և ոլորտում ստեղծել կապեր, ինչպես նաև ձևավորել ընդհանուր օրակարգեր ամբողջ աշխարհում: Վերջին տասնամյակում GFAR-ը, որպես բազմաշահակից համաժողով, հաջողությամբ իրականացնում է նաև ագրոպարենային ոլորտի նորարարությունների համակարգի բարելավման աշխատանքներ, որը հնարավորություն է ստեղծում ամբողջ աշխարհում

Սոս Ավետիսյան
ԱՀԿՄԿ հիմնադրամի
հանրային կապերի
մասնագետ

ՍԵՍԻՆԱՐ

ՄՇԱԿԱՐՈՒՅՄԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջերս Սյունիքի մարզի Աշոտավան համայնքում հատապտուղների մշակությամբ զբաղվող 10 ֆերմեր, World Vision-ի տնտեսական ծրագրերի զարգացման ղեկավար Իրեն Բալայանի հետ միասին, այցելեցին Կանաչ ուսուցման կենտրոն՝ ծանոթանալու ավելի քան 80 տեսակի բարձրարժեք մշակաբույսերի մշակության գաղտնիքներին:



Այդ բույսերի շարքում էին ֆերմերների համար անչափ հետաքրքիր անփուշ մոշո, հապալասը, լոռամրգին, սև, կարմիր և սպիտակ հաղարջը, կոկոռնեին, բազմաբերք ելակը, ինչպես նաև սև, դեղին և վարդագույն ազնվամորին:

պատասխանեցին ֆերմերների բազմաթիվ հարցերին:

Մասնագետներ Նունե Սարուխանյանը, Արզուման Տոնոյանը և Վարդան Սանոյանը ներկայացրեցին այդ մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները, ինչպես նաև ցուցադրեցին կաթիլային ոռոգման համակարգի առավելությունները: Վերջինս անչափ կարևոր է և համարվում է բարձր բերքի հիմնական երաշխիքներից մեկը: Մասնագետները մանրամասնորեն

Միջոցառման ավարտին խումբը, Կանաչ ուսուցման կենտրոնի գողտրիկ մի անկյունում գրուցեց մասնակիցների հետ: Հաճելի էր լսել, որ ֆերմերները տպավորված են տեսածով: Նրանք նշեցին, որ մինչ այդ չէին պատկերացնում, թե նման փոքր տարածքից, այն էլ՝ սակավաջուր պայմաններում, կարելի է ստանալ մեծ եկամուտներ: Ուրախությամբ հայտնեցին նաև, որ իրենք էլ

անպայման նման փոքր ֆերմերային տնտեսություն կհիմնեն մոտ ապագայում:

Միջոցառման մասնակից ֆերմերները Կանաչ ուսուցման կենտրոնից նվեր ստացան՝ սերմեր և մասնագիտական գրականություն: Թե՛ հյուրընկալող կողմը և թե՛ այցելուները կարևորեցին նմանատիպ այցերը և խնդրեցին, որ դրանք այսուհետ պարբերական բնույթ կրեն:

«Կանաչ արահետ» 34

ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՏՈՒԹՅԱՆԸ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման կենտրոն ՀԿ-ը գործում է ՀՀ Շիրակի մարզում՝ սկսած 2004 թվականից, սակայն պաշտոնապես գրանցվել է 2005 թվականին: Կազմակերպության առանցքային խնդիրը մարզի գյուղերի զարգացումն է, նշված ոլորտներում խնդիրների միասնական լուծումը:



Կազմակերպության նախագահ Գևորգ Պետրոսյանի գնահատմամբ, գյուղատնտեսության ոլորտի հաջողված ծրագրերից է մարզի գյուղերում, GARD-ի հետ համատեղ իրականացված, ոչ-խարենի կթի գործընթացի բարելավումը: Ծրագրերից մեկն է վերաբերում է «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի» հետ համատեղ իրականացված կլիմայի փոփոխության դիմակայությանը: «Տասնամյա գործունեության ընթացքում մեր կազմակերպությունն իրականացրել է 18-20 խոշոր ծրագիր, որտեղ ընդգրկվել են ոչ միայն Շիրակի, այլև՝ հանրապետության մյուս մարզերը» - նշում է ՀԿ-ի նախագահ Գևորգ Պետրոսյանը: Ուշագրավ ծրագրերից մեկն էլ, ըստ պարոն Պետրոսյանի, վերաբերում է վերականգնող էներգետիկայի ոլորտին: Ծրագիրը հնարավորություն է տալիս, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, տնտեսապես արդյունավետ եղանակով, լուծել ջերմոցների ջեռուցման հարցը: Այդ նպատակով կիրառվում են արևային օդատաքացուցիչներ, ջրատաքացուցիչներ և ջերմային պոմպեր: Գյուղատնտեսության ոլորտի հաջողված ծրագրերից մեկն էլ իրականացվել է Ախուրյանի տարածաշրջանի շուրջ 2000 բնակիչ ունեցող Բասեն համայնքում: Ծրագրի շրջանակներում, 70 մ² տարածքի վրա կառուցվել է ժամանակակից ջերմատուն, որի հիման վրա ստեղծվել է ուսումնացուցադրական կենտրոն: Աճեցնում են հիմնականում բանջարանոցային մշակաբույսեր՝ վարունգ, լոլիկ, կանաչեղեն և այլն, իսկ ստացված բերքը հատկացնում են գյուղի մանկապարտեզին: Որպես ջեռուցման աղբյուր՝ օգտագործվում է արևային էներգիան: Կազմակերպվել է նաև կենսահումուսի արտադրություն: Շիրակի մարզում այս և նման ծրագրերի իրականացումը, դրական տեղաշարժեր է աճանագրում:

ՀԿ-ի նախաձեռնությամբ, Գյումրիում բացվել է «Բնապահպանական տեղեկատվություն» հասարակական կենտրոն, որը նույնպես հեռանկարային ծրագրեր ունի: Գևորգ Պետրոսյանի կարծիքով, աջակցության ծրագրերը նպաստում են տարածաշրջանում արտագաղթի կանխմանը, քանի որ դրանց իրականացմանն իրենց անմիջական մասնակցությունն ունեն նաև մասնագետները:

«Բիոսոֆիան» ակտիվորեն մասնակցում է նաև գյուղատնտեսության ոլորտում գործող հասարակական այլ կազմակերպությունների հետ: Համատեղ մշակվում են նոր ծրագրեր կյանքի են կոչվում նոր մտահղացումներ: Գևորգ Պետրոսյանի տեղեկացմամբ, համագործակցության լավագույն ավանդույթ է ձևավորվել «Կանաչ արահետ» ՀԿ-ի հետ: «Մենք ոչ թե մրցակիցներ ենք, այլ գործընկերներ, քանի որ ունենք մտահղացումների ընդհանրություններ և նույնաոճ գործելակերպ», - նշում է ՀԿ-ի նախագահը: «Կանաչ արահետ»-ի հետ համատեղ, մարզի 3 համայնքներում ձևավորել են կանանց խորհուրդներ, որոնք տնտեսական ոլորտում իրականացնում են ակտիվ գործունեություն: Իսկ Արեգնադեմ համայնքում ստեղծել են կաթի մթերման և վերամշակման կոոպերատիվ, այդպիսով՝ համայնքում ամբողջությամբ լուծվել է կաթի իրացման խնդիրը:

«Բիոսոֆիա» ՀԿ-ը շարունակում է ընդլայնել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող աջակցության ծրագրերի շրջանակը, որոնք նպատակաուղղված են մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը: Բոլոր ծրագրերն էլ, ըստ Գևորգ Պետրոսյանի, շարունակական են և մեծ հեռանկարայնություն ունեն:

Նեղի Սահակյան

ՀԱՐՉԱԶՐՈՒՄ

ՆՈՐՈՒՅԹ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«Ինտերստանոկ» գիտաարտադրական ձեռնարկությունը հանրապետության այն եզակի արտադրություններից է, որն իր գործունեության ընթացքում գրեթե չի դադարել արտադրանք տալուց: Նույնիսկ 1990-ականներին արտադրությունն աշխատել է երկրի պաշտպանության համար, արտադրել է հատուկ հաստոցներ՝ պահանջված արտադրատեսականիներ:

75-ամյա Վիլեն Դոլուխանյանը 1960-ական թվականներից աշխատանքի է անցել այս ձեռնարկությունում՝ կոնստրուկտորի աշխատանքից մինչև ձեռնարկության նախագահ, այնուհետև՝ գլխավոր տնօրեն: Այս արտադրությունում աշխատանքներ են իրականացվել գրեթե բոլոր բնագավառների համար, այդ թվում՝ նաև գյուղատնտեսության ոլորտի համար:



Յանդիպման ընթացքում, ձեռնարկությունում իրականացվող աշխատանքների, հաջողությունների ու խնդիրների մասին ներկայացրել է Վ. Դոլուխանյանը:

- Պարոն Դոլուխանյան, հիմնականում, որ կազմակերպություններն են եղել պատվիրատուներ, և ի՞նչ արտադրատեսականիներ են արտադրվել:

Այն ժամանակ մեր պատվերները գալիս էին կենտրոնացված կերպով՝ Մոսկվայից կամ ճյուղային նախարարություններից: Որքան էլ, որ բարդ պատվերներ են եղել՝ մեծ ավտոգործարանների, գործարանների, արտասահմանի համար, միշտ կատարել ենք: Մեծ քանակությամբ արտադրված հաստոցներ ենք ուղարկել ԳԴՀ, մասնակցել ենք «Կամազ» գործարանի, Խարկովի գյուղատնտեսական արտադրանք տվող կոմբայնների շարժիչներ արտադրող գործարանի հաստոցների պատրաստման գործին: Այդ աշխատանքների իրականացման համար մշտապես երիտասարդ կադրեր՝ ենք պատրաստում, որպեսզի կարողանանք կարգավորել բոլոր խնդիրները:

Նեկ պահին պատվերներ ունենք և՛ ՌԴ-ից, և՛ Հայաստանից, արդեն սկսել ենք գյուղատնտեսության համար արտադրել խաղողի այգիների սյուներ, բետոնի փոխարեն՝ ալյումինից: Սյուները գնային տեսակետից նախ մատչելի է, երկրորդն էլ՝ շատ քիչ նյութատար, մենք ամեն ինչ անում ենք, որ ինքնարժեքը ցածր լինի, որպեսզի գյուղացին կարողանա գնի:

- Առաջիկայում իրականացվող ի՞նչ ծրագրեր ունեք:
Մենք մեծ ծրագիր ենք իրականացնում: Փորձում ենք պեռլիտ ստանալ, իսկ դրանից՝ գազ, որն էլ կօգտագործվի ջերմոցների տաքացման համար: Պատվերներ կան, այս տարվանից, կարծում եմ, կկիրառենք:

Նաև նախագծում և պատրաստում ենք փոքր հեկեր, որոնք տեղադրված են Ղափանից մինչև Նոյեմբերյան՝ գրեթե բոլոր գյուղերում: Պատվերներ ունենք Ուզբեկստանից և Ղազախստանից:

- Ի՞նչ խնդիրներ կան, որոնք առաջնային լուծումներ են պահանջում:
Ձեռնարկությունում անընդհատ Նոր արտադրանք, փորձնական նմուշներ ենք արտադրում: Պատվերներ ունենք, որոնք մի քանի ամսում ենք պատրաստում, օրինակ՝ քար մշակող 12 տ քաշ ունեցող հաստոցը պատրաստ է լինում 6 ամսում:

- Գյուղատնտեսության հետ կապված ի՞նչ Նոր աշխատանքներ պետք է իրականացնենք:
Այս պահին տրակտորների, կոմբայնների դետալների վերանորոգման աշխատանքներ ենք կատարում, գյուղատնտեսական տեխնիկայի համար կարող ենք Նոր դետալներ արտադրել, որը կարևոր նշանակություն ունի և երկրի, և գյուղատնտեսության զարգացման համար:

ԴԻՄՆԱԿԱՐ

«ԴՈՒՍՏՐ ՄԵԼԱՆՅԱԻ» ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿԱՆԻՆ

Ռուբեն Հարությունյանը ծնվել է Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում: 1974թ.-ին ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետը: Ընդունվել է աշխատանքի Կալինինոյի պանրագործարանում՝ որպես լաբորատորիայի վարիչ, այնուհետև՝ արտադրության պետ և գլխավոր ինժիներ՝ մինչև 1996թ.:

- Պարոն Հարությունյան, ո՞ր թվականին է հիմնադրվել «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն:



Կալինինոյի պանրագործարանի սեփականաշնորհումից հետո 1996թ.-ին հիմնել եմ «Սարգիս» ընտանեկան ձեռնարկությունը, որը 1999թ.-ին վերանվանվել է «Դուստր Մելանյա» ՍՊԸ, որտեղ և աշխատում և ղեկավարում եմ մինչև օրս:

- Ի՞նչ տեսականիներ են արտադրվում, որտեղից եք ձեռք բերում հումքը՝ կաթը, փաթեթավորման նյութերը:

Ձեռնարկությունում այժմ, սկզբնական երկու տեսակի փոխարեն, արտադրվում են շուրջ տասը տեսակի պանիրներ: Առանձնակի ուշադրության են արժանի «Ալաշկերտ» և «Լալվար» տեսակի պանիրները, որոնք մշակվել և ներդրվել են արտադրությունում: Արտադրության կազմակերպման համար ձեռնարկությունը մշտապես օգտագործում է բացառապես կովի անարատ կաթ, որը մթերվում է Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանի ֆերմերային տնտեսություններից, իսկ բաղադրիչները և փաթեթավորվող նյութերը ներկրվում են հիմնականում եվրոպական երկրներից:

- Որտե՞ղ է սպառվում պանրի տեսականին, ո՞ր երկրների հետ եք համագործակցում:

Պատրաստի արտադրանքը սպառվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև իրականացվում են կանոնավոր արտահանումներ Ռուսաստանի Դաշնություն և ԱՄՆ՝ սկսած 2001թ.-ից: Արդյունավետ համագործակցություն է ծավալվել նաև ԱՄՆ Գյուղնեպարտամենտի (USDA), «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի (CARD) հետ, որոնք շնորհիվ իրականացվել են բազմաթիվ նախագծեր՝ ուղղված կաթի արտադրական, իրականական և քանակական բարելավմանը, ինչպես նաև պանրագործության զարգացմանը և արտահանումների կազմակերպմանը: Նոր պանրատեսակների արտադրության գործընթացն անընդհատ նորացվում է, ինչ վերաբերվում է այս տարվան, ապա, որպես նորույթ, առաջարկվում է «Լալվար» պանրատեսակը:

- Սննդի անվտանգության հետ կապված խնդիրներն ինչպե՞ս են լուծվում:


«Դուստր Մելանյա» ՍՊԸ-ի պանրագործարանն արտադրություն է իրականացնում ՀՀ Սննդամթերքի անվտանգության մասին օրենքի պահանջներին համապատասխան: 2012թ.-ին մշակվել է սննդի անվտանգության HACCP համակարգ, որը զարգանում և բարելավվում է: Գործում են քիմիական և մանրէաբանական լաբորատորիաներ: Արտադրությունը 2012թ.-ին հավաստագրվել է ISO 22000 միջազգային հավաստագրով: Ձեռնարկությունում սննդի անվտանգության հետ կապված խնդիրները ընթացիկ լուծում են ստանում և սպառողին առաջարկվում է անվտանգ սննդամթերք՝ շնորհիվ արհեստավարժ անձնակազմի, քիմիական և մանրէաբանական լաբորատորիաների և սննդի անվտանգության համակարգերի հստակ աշխատանքի:

Նյութերը՝ Մանվել Կիրակոսյանի

ԿՈՒՊԵՐԱՏԻՎ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ ՊԵՏՔ Է ԱԶԱԿՑԵԼ ԿՈՒՊԵՐԱՏԻՎԻՆ

«Պետք է լսել մարդկանց, ուշադրություն դարձնել նրանց կարիքներին», - ասում է ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի գյուղատնտեսական կոոպերատիվի 70-ամյա անդամ Գյուլվարդ Ենգիբարյանը: ՕԶՍՖԱՄ-ի աջակցությամբ այս տարի հիմնադրված կոոպերատիվի ամենատարեց անդամն է նա՝ իմաստնացած, տարիքի համեմատ՝ աշխույժ և կենսախիղճ:



Քին, մեծացնել թռչուններին: Զանի դեռ ուժերը թույլ են տալիս, պետք է աշխատի, ուզում է իր փորձը, գիտելիքները փոխանցել երիտասարդներին: «Տեղեկացա կոոպերատիվի մասին, մտածեցի՝ կարելի է

փորձել, տեսնեք, թե ինչ կստացվի: Մարդիկ աշխատում են համատեղ, իսկ ազնիվ և հետևողական աշխատողն անպայման հաջողության կհասնի: Այնպես որ, հուսանք աշխատանքը կոոպերատիվում կբարելավի մեր նյութական վիճակը, բացի այդ՝ կհզորանա համայնքը», - կոոպերատիվի մասին իր խոհերն է կիսում տիկին Գյուլվարդը: Գյուղից կոպերատիվում ընդգրկված է 11 ընտանիք: Մարդիկ իրենց գոհունակությունն են հայտնում ՕԶՍՖԱՄ-ին՝ աջակցելու համար: Կուղեկային, որ նմանատիպ կոոպերատիվներ ստեղծվեին հանրապետության բոլոր համայնքներում: Միայն թե, տիկին Գյուլվարդի կարծիքով, անհրաժեշտ է պետական աջակցություն, հարկավոր է կատարել համակարգային փոփոխություններ: «Պետք է բարելավվել գյուղի բնակչության կյանքը, ծրագրերը թողնել ոչ թե թղթի վրա, այլ՝ գործի անցնել: Բարեբախտաբար, իմ գույգ որդիներն առայժմ գյուղում են, սակայն նրանց հարկավոր է մշտական աշխատանք: Գործը խելամոռերն կատարելու արդյունքում, կբարելավվի նաև գյուղաբնակների կյանքը, մանավանդ, որ մարդիկ պատրաստ են աշխատելու: Սակայն, մեր օրինակով, սկզբնական շրջանում պետք է աջակցել կոոպերատիվին, որպեսզի կայանա այն», - եզրահանգում է տիկին Գյուլվարդը:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

ԼՈՒԿԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Լուիկին զգալի վնաս են հասցնում բազմաթիվ վնասատու միջատներ և տզեր: Արդյունքում՝ բույսերը վաղաժամ չորանում են, ընկնում է բերքի որակն ու ապրանքային տեսքը, խիստ նվազում բերքատվությունը: Արարատյան դաշտի պայմաններում լուիկին վնասում են սովորական արջուկը, դեղձենու կամ ծխախոտի վիճը, սովորական ոստայնատիզը, բամբակենու կնգուղակերը, կոլորադոս բզեզը, ցիտոպեյտոս մլուկը: Վնասատուների դեմ պայքարի աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել սահմանված տնտեսական վնասակարության շեմը (ՏՎՇ):



Սովորական արջուկ

Բազմակեր վնասատու է: Ապրում է հողում՝ իր կողմից պատրաստված բներում: Մեկ բնում դնում է մինչև 420 ձու: Կյանքի ընթացքում ձվադրում է մեկ անգամ: Սնվում է բույսերի բոլոր օրգաններով, կրծում ցանված սերմերը, նուրբ արմատները, պալարները: Ուժեղ վնասի դեպքում, շատ հաճախ, կատարվում է վերատնկում և վերասածիլում:

Վնասատուի զարգացման ամբողջ փուլը շարունակվում է 13-14 ամիս:

Պայքարի միջոցառումներ

Սաճիլանոցում և դաշտում արջուկի և մյուս հողաբնակ վնասատուների դեմ (ճռիկներ, հողաբնակ բվիկներ և այլն) կատարել պայքար՝ Բազուդիին 600 ՋԼ և համակցված կերով պատրաստված գրավչանյութով 1:10 կամ 1:20 հարաբերությամբ՝ 30 կգ/հա ծախսի նորմայով:

Դեղձենու կամ ծխախոտի վիճ

Վնասում է ավելի քան 400 տեսակ բույսերի, հատկապես մեծ վնաս է պատճառում լուիկին: Լուիկի վնասի հետևանքով, բույսերը խիստ ձևափոխվում են՝ տերևները՝ դեղնում, ծաղիկները թափվում են, կոկոնները չեն բացվում: Ստացված բերքի ապրանքային արժեքը լինում է ցածր: Հանդիսանում է ավելի քան 100 վիրուսների փոխանցող: Տալիս է մինչև 14-16 սերունդ:



Պայքարի միջոցառումներ * Լվիճների (ինչպես նաև ցիկադների, թրիպսների) միգրացիայի ժամկետները որոշելու համար նպատակահարմար է կիրառել դեղին գունաթակարդներ:

* Կատարել պայքար Բուլդոկի 0,5 լ/հա, Տալստարի 0,5 լ/հա, Ակտարայի 0,02 կգ/հա պատրաստուկներից որևէ մեկով:

Սովորական ոստայնատիզ

Տարածված է ամենուրեք: Վնասում է ավելի քան 200 տեսակ բույսերի: Բանջարաբուստանային մշակաբույսերից գերազանցում է լուիկը, սմբուկը, վարունգը, ձմերուկը, սեխը: Սնվում է տերևների ստորին կողմից, որի հետևանքով տերևների վրա առաջ են գալիս դեղնավուն բծեր: Գունաթափված հատվածները միանում են, տերևները դեղնում, թառամում և չորանում, պատվելով բարակ ոստայնով: Արարատյան դաշտի պայմաններում տալիս է 14-18 սերունդ՝ առավելագույնը՝ 22 սերունդ:

Ամռանը մեկ սերնդի զարգացումը տեղի է ունենում 7-8 օրում, գարնանը և աշնանը՝ 21-22 օրում: Վնասը նկատվում է հուլիսի երկրորդ կեսից: Մեկ եփ պտղաբերությունը կազմում է 150-300 ձու:

Պայքարի միջոցառումներ

Սովորական ոստայնատիզի տնտեսական վնասակարության շեմը լուիկի համար սահմանված է 2-3 տիզ՝ մեկ տերևի վրա:



* Պ ա յ Ք ա Ր ը կատարել Պեգաս (1,5 լ/հա), Տալստար (0,6 լ/հա), Վերտիմեկ (0,5 լ/հա) կամ Կարատե (1,0 լ/հա) պատրաստուկներից որևէ մեկով:

* Մշակել ոստայնատիզ նկատմամբ համեմատաբար դիմացկուն Պակմոր, Բինգ-Ռոք, Երագ, ՕՄՕ-152 լուիկի սորտերը:

Բամբակենու կնգուղակեր

Բազմակեր վնասատու է: Չանգվածային բազմացման ժամանակ վնասում է լուիկին, պղպեղին, ծխախոտին և մի շարք այլ մշակաբույսերին: Առաջին հասակի թրթուրները սնվում են բույսերի նուրբ տերևներով, մյուս հասակի թրթուրները՝ բացառապես կոկոններով, ծաղիկներով և պտուղներով: Մեկ թրթուրը ընդունակ է իր կյանքի ընթացքում ոչնչացնելու օրինակ բամբակենու մինչև 20 պտղատարրեր: Մեծ վնաս է հասցնում նաև լուիկին: Թիթեռի պտղաբերությունը կազմում է մինչև 1000 ձու: Տարվա ընթացքում տալիս է 3 սերունդ:

Պայքարի միջոցառումներ

Բամբակենու կնգուղակերի տնտեսական վնասակարության շեմը, լուիկի կոկոնակալման, պտղագոյացման շրջանում, սահմանված է 3-5 թրթուր՝ 100 բույսի վրա:

* Վնասատուի թռչելու դինամիկան ուսումնասիրելու և պայքարի ժամկետները ճշտելու համար նպատակահարմար է կիրառել ֆերոմոնային թակարդներ:

* Ելնելով ՏՎՇ-ից՝ լուիկի բույսերի վաղ շրջանում վնասատուի դեմ կատարել պայքար Բուլդոկի 0,5 լ/հա կամ Դեցիսի 0,5 լ/հա պատրաստուկներից որևէ մեկով՝ պահպանելով 20 օր սահմանված սպասման ժամկետը: Բերքի հասունացման շրջանում փոքր և միջին հասակի թրթուրների դեմ պայքարել Բիտոքսիբացիլին (ԲՏԲ) մանրէակենսաբանական պատրաստուկով՝ 2,5-3 կգ/հա ծախսի նորմայով:

Կուրադայի բզեզ

Կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի, հատկապես սմբուկի և լուիկի վնասատու է: Լայն տարածված է Արարատյան դաշտում: Մեկ էգը կարող է դնել մինչև 2400 ձու:



Ձվադրումը 25-30-ական կույտերով՝ մեկ տերևի վրա: Թրթուրի զարգացման փուլը տևում է 15-22 օր, հարսնյակինը՝ 1-2 շաբաթ, հարսնյակավորվում է հողում: Արարատյան դաշտի պայմաններում բզեզը տալիս է երկու սերունդ:

Պայքարի միջոցառումներ

* Կատարել վնասատուի բզեզների և թրթուրների մեխանիկական հավաք:

Պայքարի նպատակով կիրառել Բուլդոկ (0,3 լ/հա) կամ Ակտարա (0,06 կգ/հա) պատրաստուկներից որևէ մեկը: Լուիկի պտղագոյացման շրջանում վնասատուի 1-2 հասակի թրթուրների դեմ օգտագործել Բիտոքսիբացիլին (ԲՏԲ) պատրաստուկը՝ 2-3 կգ/հա ծախսի նորմայով: Հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի համար առաջարկվող պատրաստուկներն անհրաժեշտ է օգտագործել փոխփոխ՝ դիմացկուն ձևերի առաջացումը կանխելու նպատակով:

Լ. Սիմոնյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու

ՖԻԶԱԼԻՍ

Ֆիզալիսը մորմազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույսերի ցեղ է, որը միավորում է բնության մեջ հանդիպող և մշակովի մոտ 100 տեսակներ: Կոճղարմատը բարակ է, տարածվող: Տերևի երկարությունը մոտ 10 սմ է, լայնքը՝ 6 սմ, գազաթը՝ սուր, եզրերը՝ ամբողջական կամ մանր ատամնավոր: Ծաղիկները սպիտակ են, դասավորված սրագազաթ ծաղկաթերթերով: Ծաղկում է ամռան սկզբին, փոշոտումը կատարվում է միջատների միջոցով: Ծաղկման շրջանից հետո ծաղկաբաժակը մեծանում է՝ կազմելով սնամեջ, բարակ պատերով պարկիկ, որի մեջ գտնվում է մեկ բազմասերմ պտուղ: Պտուղները հասունանում են ամռան վերջում: Բույսի գիտական անվանումն առաջացել է Physao՝ փքված բառից և կապված է պտուղը շրջապատող պարկիկի տեսքի հետ: Ֆիզալիսի տեսակներից մեկի (franchetti) հայրենիքն է Ճապոնիան և Արևելյան Ասիան: Ֆիզալիսի պտղապարկը հաճախ համեմատում են չինական լապտերի հետ:

Ֆիզալիսի ծաղկաբաժակ-լապտերիկները յուրահատուկ են՝ իրենց բազմերանգ գեղեցկությամբ. չորացրած վիճակում դրանք կարող են շատ երկար պահպանվել և անգնահատելի են ճմեռային ծաղկեփնջեր կազմելու համար: Առավել հայտնի են Լատինական և Կենտրոնական Ամերիկայի բնական պայմաններում տարածված տեսակները: Ֆիզալիսի՝ գետնամորու նուրբ համ ունեցող տեսակի պտուղները վառ դեղին են, շատ քաղցր, մեկ պտղի զանգվածը 5-10 գրամ է: Չորացրած պտղի համը նման է չամիչի, պահպանման ժամկետը բավականին երկար է: Այս տեսակը վաղահաս է, ջերմասեր և լուսասեր:



Պերուական տեսակի պտուղն օվալաձև ձգված է, նարնջագույն, մանր, անանասի արտահայտված բուրմունքով: Պտուղը նույնպես ուտելի է, պատրաստում են մուրաբա և հրուշակեղեն: Պահանջկոտ է ջերմության, խոնավության և հողի բերրության հանդեպ: Մեքսիկական ֆիզալիսի պտուղները խոշոր են՝ մեկ պտղի զանգվածը 40-100 գրամ է: Պտուղները ձևով նման են լուիկի՝ տափակ, գնդաձև: Գունային երանգավորումը լայն է, բաց կանաչից՝ մուգ մանուշակագույն, համային որակներով զիջում են վերոգրյալ տեսակներին, գրեթե անհոտ են: Կենսաբանական հատկություններով մոտ են լուիկին, սակայն ավելի ցրտադիմացկուն են: Պտղից պատրաստում են մարինադներ, բանջարեղենային խավիար, մուրաբա: Այս տեսակն անվանում են նաև մեքսիկական լուիկ և ֆիզալիս՝ բանջարեղենային:

«Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Լոռու մարզերում և ամենուր՝ բնության մեջ տարածված է հարսնախոտը (Physalis alkekengi), այլ անվանումներն են՝ բոջոջ, բշտի դեղ:

Ծաղկաթերթերը սպիտակ կամ բաց դեղին են, հիմքում կան դարչնագույն բծեր: Դեղաբույսն օգտագործվում է թարմ և հրուշակեղենի արտադրության մեջ, նաև դեկորատիվ այգեգործության մեջ՝ կտրելու նպատակով: «Արարատյան դաշտավայրում և ցածր լեռնային գոտիներում մշակվում է ֆիզալիս բանջարեղենայինը:

Հարսնախոտի գիտական անվանումն է՝ ֆիզալիս սովորական: Պարզվել է, որ պտուղն ունի միզամուղ հատկություններ, իսկ պտղապատյանի յուղամզվածքն արագացնում է վերքերի ապաքինումը: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում են թարմ և չորացրած պտուղը, պտղափայտը, բույսի արմատը: Պտուղների հասունացման շրջանը երկար է՝ օգոստոսի վերջից մինչև առաջին սառնամանիքները: Արտաքին պատյանը չհեռացնելու դեպքում, պտուղը պահպանվում է մի քանի ամիս:


Զգուշացում: Հարսնախոտի վերգեղնյա մասը և պղպեղապայտը պարունակում են թունավոր ալկալոիդներ: Թեպետ չոր տերևներից և պղպեղապայտի թաղանթից թեյն օգտակար է հիպերտոնիայի դեպքում, այն կարելի է խմել միայն փորձառու մասնագետի հետ խորհրդակցելուց հետո, քանի որ չափաբաժինը կախված է հիվանդի վիճակից և կարող է շարժել չեփն լինել: Հարսնախոտի պտուղները կարելի է ուրել միայն լիարժեք հասունանալուց հետո, դրանք դառնահամ են:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՄԵՎ ՊՂՊԵՂ

Պղպեղագգինների ընտանիքի (piperaeae) առավել հայտնի տեսակները երեքն են...

Պղպեղ երկարը բնության մեջ հանդիպում է Հնդկաստանում, Ֆիլիպիններում, Մոլուկյան և Մեծ Զոնդի կղզիներում...



քում և չորացնում են նախքան հասունանալը: Պղպեղ երկարի չորացրած պտղաբույլը շատ ավելի կծու է...

Միջնադարում պղպեղ երկարի առևտուրը մեծ ծավալներ է ունեցել, իսկ հաջողակ առևտրականներին անվանել են «Պիպերացի»:

Պղպեղ Կուբեբի հայրենիքը Մեծ Զոնդի կղզիներն են (Ջավա, Սումատրա և այլն), որտեղ էլ այն մշակվում է:

Չորուչացում: Չափաբաժինների գերազանցումը կարող է առաջացնել ստամոքսի սուր խանգարում, արտաքին օգտագործման դեպքում՝ այրվածք: Պղպեղ սևը և դրանից ստացված պատրաստուկները հակացուցված են ստամոքսի և 12-մատնյա աղիի, լյարդի հիվանդությունների դեպքում:

վում է աշխարհի բոլոր արևադարձային գոտիներում: Պտղաբերում է երրորդ տարում, բերքատվությունը հասնում է առավելագույնին՝ (3,5կգ մեկ թփից), հատկապես 7-9-րդ տարում:

Պտուղները հավաքում են մինչև հասունանալը, երբ դրանք կանաչ կամ դեղին են, բերքահավաքի ժամանակը մի քանի ամիս է, քանի որ պտուղներն անհավասարաչափ են հասունանում:

Սև պղպեղն ամենատարածված և մեծ պահանջարկ ունեցող համեմունքն է: Պարունակում է 5-9 տոկոս պիպերին, մինչև 4 տոկոս եթերային յուղ, ալկալոիդներ, քլորիդներ, բուրավետ խեժեր, ալկալոիդներ, օսլա, այլն:

Բարձր ներգանգային ճնշման դեպքում, օրը մեկ անգամ, 5-10 ռուպե, ծամել 4-6 հատ պղպեղի պտուղ և չամիչ, առաջացող հեղուկից պետք է պարբերաբար ազատվել: Շարունակել մեկ ամիս:

Քրոնիկ բրոնխիտ. 1 թ/գ թարմ աղացած պղպեղ սևի պտղի փոշին խառնեք 300 գ մեղրի հետ: Խմեք 1-ական թ/գ՝ օրը 3 անգամ: Խորհուրդ է տրվում որպես միզամուղ՝ սրտի անբավարար աշխատանքի, նաև դաշտանի ուռացման կամ բացակայության դեպքում:

Գրիպի դեպքում խառնել կեսական թ/գ պղպեղի պտղի և կոճապղպեղի արմատի փոշիներ, 2 թ/գ մեղր: Խմել 3-ական թ/գ՝ օրը 4-5 անգամ: Լավ արդյունք է տալիս հիվանդության նախնական շրջանում:

Հակաուռուցքային թերապիայի համար պետք է եռացնել չզոված բուսայուղը, ապա անջատել կրակը, պղպեղի պտուղները 5 ռուպե թրմել յուղի մեջ: Այնուհետև պղպեղի պտուղը տեղադրել սև չամիչի մեջ: Ուտել 5 այրախիսի «դեղահաբ» օրվա ընթացքում:

Չորուչացում: Չափաբաժինների գերազանցումը կարող է առաջացնել ստամոքսի սուր խանգարում, արտաքին օգտագործման դեպքում՝ այրվածք: Պղպեղ սևը և դրանից ստացված պատրաստուկները հակացուցված են ստամոքսի և 12-մատնյա աղիի, լյարդի հիվանդությունների դեպքում: Պետք է զգուշանան ալերգիկ հիվանդները (սուր շրջանում):

ԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ՄԻՐԳ - ՄԱՐԱԿՈՒՅԱ

Մարակույան արևադարձային մրգի տեսակ է: Բառը գալիս է հնդկերենից, երբեմն անվանում են նաև փեշենֆուտ (passion fruit):



կար միկրոդարձեր, հարուստ են ցանցաշերտով և հակաօքսիդանտ ակտիվություն ունեցող նյութերով, սպիտակուցներով և ածխաջրերով:

Մենդարանները խորհուրդ են տալիս օգտագործել այն սրտանոթային համակարգի, լյարդի, երիկամների հիվանդությունների ժամանակ և քաշի իջեցման նպատակով: Վիտամինների մեծ քանակը փաստում է, որ մարակույան երկաթի, կալցիումի և մագնիսիումի անփոխարինելի աղբյուր է, միրգը հարուստ է A, C և K վիտամիններով, ֆոսֆորով: Այս էլեգանտ պտուղն օգտակար է ոչ միայն երեխաներին, այլև՝ ապագա մայրերին:

Մարակույան ունի հակամանրէային, ջերմիջեցնող և թուլացնող ազդեցություն: Այն նվազեցնում է խոլեստերինի մակարդակն արյան մեջ, դրական է ազդում մարտոդական համակարգի աշխատանքի վրա: Հյութն ունի կազդուրիչ հատկություն: Այն օգնում է քնել և ճնշում է քաղցկեղածին բջիջների աճը, իսկ տերևներն օգտագործվում են բժշկական նպատակներով՝ հողացավերի, գլխացավերի ժամանակ տերևներ:

րից պատրաստված թուրմը խմում են: Պտղի յուրաքանչյուր բաղադրիչ օգտագործվում է հիվանդությունների բուժման համար:

Մարակույա միրգն ունի քաղցր և փափուկ փափկամիս, որը պարունակում է անուշահամ մանր սերմեր: Մարակույան, ինչպես այլ արևադարձային մրգերը, օգնում է պայքարել օրգանիզմի ավիտամինոզի դեմ: Պտուղներն ուտելի են, հիմնականում խառնում են նարնջի հյութի հետ կամ ավելացնում են յոգուրտներին:

Այն ՌԴ-ում և ՀՀ-ում տարածում է գտել բոլորովին վերջերս: Ունի ավելի քան 100 տեսակ, սակայն աճեցնել հնարավոր է միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Առաջին նախապայմանը մեծ քանակությամբ արևի և ջերմության առկայությունն է: Կարող են լինել հարթ կամ կնճռոտված արտաքինով: Սակայն, համային տարբերությունը մեծ չէ: Ընդունված է կարծել, որ հարթ կեղևով մարակույաններն ավելի քիչ են հասունացած, ավելի թթու են և ավելի պինդ: Հետևաբար նրանց համար, ովքեր նախընտրում են առավել անուշահամ ու քաղցր միրգ, ապա պետք է ուշադրություն դարձնեն կեղևի տեսքին: Այն կարելի է աճեցնել նաև տնային պայմաններում, բայց անհրաժեշտ է մեծ տարածություն և հատուկ խնամք: Անհրաժեշտ է իմանալ, որ հարավային բույսերը բավական անհանդուրժողական են ցրտի նկատմամբ: Նրանք, ովքեր առաջին անգամ են հանդիպում մարակույա մրգին, առաջինը, որ մտածում են, թե ինչպես է պետք այն ուտել: Հիմնականում դանակի օգնությամբ զգուշորեն մաքրում են կեղևը, արագորեն բաժանում են երկու մասի, որ հյութը չհոսի, և ուտում են թեյի գդալի օգնությամբ:

Աննկարագրելի համ է տալիս խմորեղեններին: Նաև կարելի է օգտագործել մրգային աղցաններ պատրաստելիս՝ ավելացնելով վերջին պահին՝ խառնելուց առաջ: Այն օգտագործում են կոկտեյլների մեջ: Հսկայական քանակությամբ վիտամիններ պարունակող այս էլեգանտ միրգն դիմադրողականության ամրապնդման հիմք է: Միակ վտանգն ալերգիկ ռեակցիաներն են, որ կարող են առաջանալ պտղի օգտագործումը չարաշահելիս: Համարվում է հազվադեպ մրգերից, որոնք չունեն որևէ կողմնակի ազդեցություն:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Advertisement for Agronews magazine, 2015 year, featuring subscription rates and contact information.